

ISSN 0321-0340

**ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎՈՆԵՐԻ**

**N 1 (111)
2008**

ԲՈՒՆԻՔԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎՈՎԵՐԻ

Չիտհանրամատչելի հանգես

Вестник архивов
Армении

Научно-популярный журнал

Bulletin of Armenian
Archives

Scientific practical journal

1 (111)
2008

ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ YEREVAN

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

Գլխավոր խմբագիր՝ Անատունի Վիրաբյան

Խմբագրական խորհուրդ

Արմեն Բադալյան (պատասխանատու քարտուղար)
Ալբերտ Կիրինյան, Ավագ Հարությունյան, Էմմա
Հովսեփյան, Սոնյա Միրզոյան, Աշոտ Մելքոնյան,
Արամ Սիմոնյան

© Բանբեր Հայաստանի արխիվների, 2008թ.

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ 1918-1921թթ.

Վրաստանի դեմոկրատական Հանրապետության գոյության տարիներին (1918-1921թթ.) բավականին լարված էին ոչ միայն հայ-վրացական միջպետական հարաբերությունները, որոնք դրսևորվեցին տարբեր ձևերով (ընդհուպ մինչև պատերազմով), այլև Վրաստանի ներսում լուրջ հակասություններ էին առաջ եկել երկրի հայ եւ վրաց հասարակությունների միջև: 1918թ. ամռանը Հայոց Ազգային Խորհրդի՝ Թիֆլիսից Երևան տեղափոխվելուց հետո Վրաստանում իր գործունեությունն ակտիվացրեց Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդը, որը կոչված էր ղեկավարելու այս պետության մեջ ապրող հայության ազգային, կրթական և մշակութային գործերը:

Նորակազմ վրացական պետության բոլոր ատյանները, առանձնահատուկ խանդոտ վերաբերմունք ունեին երկրի հայ ազգաբնակչության հանդեպ: Դա, թերևս, պայմանավորված էր նրանով, որ դեռևս Ռուսական կայսրության ժամանակներում Վրաստանի և մասնավորապես Թիֆլիսի հայությունը ազդեցիկ դեր ուներ և կարող էր մրցակցել նույնիսկ վրաց հասարակության հետ: Վրաց ազգի դերը իրենց պետության մեջ բացառիկ դարձնելու, ինչպես նաև մյուս ազգությունների սեփականությունը (ֆինանսական, կրթամշակութային և այլն) պետականացնելու նպատակով վրաց իշխանությունները հատկապես հայերի հանդեպ հաճախ էին դիմում խտրական քայլերի: Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդն էլ իր հերթին փորձում էր պաշտպանել հայության իրավունքները իշխանությունների վարած հայահալած քաղաքականությունից: Խորհուրդը փորձում էր հայության իրավունքները կարգավորել համապատասխան օրենսդրությամբ: Այս առումով բավականին մեծ աշխատանքներ են տարվել Վրաստանի Սահմանադիր ժողովի հետ: Երկար աշխատելուց հետո 1920թ. հունիսի 20-ին Վրաստանի Հայոց ազգային Խորհուրդը Սահմանադիր ժողովին է ներկայացնում 14 կետից բաղկացած ազգային-մշակութային ինքնավարության թեզիսները, որոնք պետք է հաշվի առնվեին երկրի սահմանադրությունն ընդունելիս: Թեզիսները հնարավորինս ընդունելի լինելու նպատակով Վրաստանի Հայոց ազգային Խորհուրդը շուրջ երկու տարի դրանց սկզբունքները քննարկել է տարբեր հանձնաժողովների, հասարակական խորհրդակցությունների շրջանակներում: Միաժամանակ կոչ է արվել վիրահայ թերթերին, ազդեցիկ հայ հասարակական, քաղաքական գործիչներին ինքնավարության հիմնադրույթները տարածել ժողովրդի մեջ: Պետք է նշել, որ Վրաստանի դեմոկրատական հանրապետության կործանումից ընդամենը օրեր առաջ (1921թ. փոտրվարին) ընդունված սահմանադրության մեջ այս թեզիսներից մի քանիսը, մասնավորապես հայոց լեզվի կիրառման կետը, որոշակի փոփոխված ձևով իրենց արտացոլումը գտան:

Խաչատուր Ստեփանյան
պատմական գիտությունների
թեկնածու

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ

Վրաստանի հայոց ազգային Խորհուրդը, որը կոչված է Վրաստանում ապրող հայության ազգային կուլտուրական գործը ղեկավարելու և նրա կրթական ու այլ կարիքները բավարարելու, ելնելով հայ ժողովրդի շահերից, մշակել ու Վրաստանի Սահմանադիր ժողովին է ներկայացրել ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ հետևյալ հիմունքները (Թեզիսները).

1. Հայերը Վրաստանի սահմաններում կազմում են Հայկական Ազգային Ինքնավարություն:

2. Ազգային Ինքնավարությունը իրականացվում է Ազգային ժողովի և նրա Գործադիր Մարմնի՝ Ազգային Խորհրդի միջոցով:
3. Ազգային ժողովն ընտրվում է համընդհանուր, հավասար, գաղտնի ու համեմատական ընտրական սկզբունքով և գումարվում է իր իսկ որոշված ժամանակամիջոցներում, իսկ Ազգային Խորհուրդը գործում է Ազգային ժողովի կողմից նրան տրված իրավունքների սահմաններում:
4. Ազգային ժողովը և Խորհուրդը հանդիսանում են հասարակական իրավական մարմիններ և ունեն իրավական անձի բոլոր իրավունքները, որոնց թվում շարժական ու անշարժ գույքեր ձեռք բերելու և վաճառելու իրավունքով՝ բոլոր օրինական եղանակներով:
5. Հայոց Ազգային Ինքնավարության գույքը ճանաչվում է Վրաստանում ապրող հայ ազգի սեփականություն:
6. Ազգային ժողովի անդամները նրա համընդհանուր ժողովներում, օգտվում են ազատ խոսքով՝ օրենսդրական հաստատությանց անդամների համահավասար հիմունքներով: Ձեռնմանների և ընդհանուր հանցանքների համար Ազգային ժողովի և Խորհրդի անդամները իրանց այդ կոչման մեջ եղած ժամանակ ենթարկվում են դատի և զրկվում են ազատությունից բացառապես դատական կարգով:
7. Այն վայրերում, ուր հայ ազգաբնակչությունը կազմում է այդ վայրի բնակչությանից ոչ պակաս քան 15 տոկոսը (քաղաքներում, գավառներում, թեմերում, գյուղերում) հայ լեզուն ճանաչվում է պետական լեզվի հետ իրավահավասար վարչական (ադմինիստրատիվ) հիմնարկություններում, ինքնավարության մարմիններում, դատական ատյանների մեջ, հասարակական ժողովներում և պոստ-հեռագրական հարաբերությունների ժամանակ և այդ հիմնարկությունները, հաստատությունները, ատյանները և պաշտոնական անձինք հայերի հետ հարաբերություններ պահպանելու միջոցին, պարտավոր են ընդունել բանավոր և գրավոր հայտարարություններ, բացատրություններ և ամեն տեսակ թղթեր հայերեն լեզվով և պատասխանել ու տալ թղթերը, նույնպես հայերեն լեզվով:
8. Օրենսդրական հաստատությունների մեջ հայ լեզուն ճանաչվում է պետականի հետ հավասար և կենտրոնական կառավարության բոլոր կարգադրությունները և համապետական օրենքները իրատարակվում են վրացերենի հետ միասին նաև հայերեն լեզվով: Հավասարապես հայերեն լեզվով են իրատարակվում վարչական հիմնարկությունների և անձերի տեղական ինքնավարությունների բոլոր որոշումները, կարգադրությունները ներկա թեզիսների 7-րդ կետում հիշատակված վայրերում:
9. Հայ լեզվի իրավունքները, որոնք հիշված են ներկա թեզիսների 6-րդ և 7-րդ կետերում, ապահովվում են հատուկ օրենքով:
10. Հայոց Ազգային Ինքնավարության իրավասության մեջ մտնում են.
- ա) Հայկական հաստատությունների և հայ անհատների ու խմբակների շահերի և իրավունքների պաշտպանությունը, որոնք բխում են նրանց՝ հայ ազգությամբ պատկանելուց:
- բ) ժողովրդական կրթության և ազգային կուլտուրայի զարգացման գործերի վարումը, նաև օգնություն հայ ազգաբնակչությանը պարենավորման, գյուղատնտեսական, առողջապահական և խնամատարական գործում:
11. Հայ ժողովրդական կրթության գործը ամբողջությամբ հանձնվում է Հայոց Ազգային Ինքնավարությանը. դպրոցներում դասավանդությունը տարվում է հայերեն լեզվով: Ստորին, միջնակարգ և բարձրագույն թե հանրակրթական և մասնագիտական դպրոցներում դասավանդելիք ծրագրերի որոշման և հաստատման, ինչպես և նրանց կառավարելու գործը ամբողջությամբ անցնում է Ազգային Ինքնավարությանը: Բարձր, տարրական և միջնակարգ դպրոցներում վրաց լեզվի դասավանդությունը պարտադիր է:
12. Հայոց Ազգային Ինքնավարությանը տրամադրվում են միջոցներ ժողովրդական կրթության և ազգային կուլտուրայի զարգացման համար՝ պետության և տեղական ինքնավարության մարմինների համապատասխան բյուջեներից, ազգաբնակչության քանակի համեմատ:

13. Ազգային ինքնավարությունն իրավունք ունի նշանակելու նաև հատուկ տուրքեր հայերի վրա, իր իրավասության շրջանի մեջ մտնող գործերի համար:

14. Մինիստրների խորհրդի նիստերում մասնակցում է մինսիտրի իրավունքներով Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչը, հայոց ինքնավարության գործերի վերաբերմամբ:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Ազգային խորհուրդը այս թեզերը համարում է այն նվազագույն իրավունքները, որոնք պիտի ապահովեն Սահմանադիր ժողովի կողմից հայության Վրաստանի հատվածին՝ նրա ազգային կուլտուրական գործերը անարգել կերպով վարելու համար:

Մոտիկ ապագայում Վրաստանի Սահմանադիր ժողովը պետի քննության առնի սահմանադրական հատուկ հանձնաժողովի կողմից մշակված Վրաստանի սահմանադրությունը:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Ազգային խորհուրդը պիտի պահանջի, որ հայ դպրոցի և ազգային այլ գործերի ինքնավարությունը ապահովված լինի հիմնական օրենքներում, Սահմանադրության մեջ:

Իր պահանջների ու դիմումների մեջ խորհուրդը կարող է ու պիտի հենվի միայն ձեզ վրա: Արժարժեցեք այս թեզերը, որով և աջակցած կլինեք Ազգային խորհրդին, ձեր իրավունքների պաշտպանության գործում:

Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի նախագահ
Անդամ քարտուղար՝

Բ.Թովչյան
Մ.Դարբինյան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 142, ք. 1: Տպագրական օրինակ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Մաղալյան Արտակ	- Կուսապատի Աթաբեկյանների դատաստանական գործը	3
Մանգասարյան Վարդիթեր	- Էջեր Պողոսյան ազգային կրթօջախի (Եգիպտոս) պատմությունից (1864-1936թթ.)	28
Սահակյան Ռուբեն	- Հայկական կամավորական խմբերի գործունեության պատմությունից	44
Ղազիյան Ալվարդ	- Արտաշես Բարսեղյանի հուշերը Ռշտունիքի հայության 1915թ. կոտորածի և ինքնապատանուության մասին	62
Ստեփանյան Խաչատուր	- Վրաստանի հայության ազգային-մշակութային ինքնավարության հարցը 1918-1921թթ.	70
Ալեքսանյան Կարինե	- Խորհրդային իշխանության ամրապնդումն Ալեքսանդրապոլի գավառում (1921թ. ապրիլ - դեկտեմբեր)	73
Մարտիրոսյան Մարինե	- Փաստաթղթեր Հայաստանում արաբկիրցիների հայրենակցական միության գործունեության մասին	92
Ղազախեցյան Վլադիմիր	- Հայրենադարձության կազմակերպման հարցի շուրջ	127
Ավետիսյան Մարո	- Արամայիս Տեր-Դանիելյանի հուշերը Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Խոսրով-Բեկ Սուլթանովի հակահայկական քաղաքականության մասին	137
Բաղալյան Արմեն	- ՀՀ Դաշնակցության գործունեությունը սփյուռքի մի քանի համայնքներում 1945-1985թթ.	144
Հարությունյան Ավագ	- Խորհրդաթուրքական սահմանի վերասահմանագծման պատմությունից (1973թ.)	175
Բրուտյան Գրիգոր	- Վիկտոր Համբարձումյան - ծննդյան 100-ամյակը	197
Հովսեփյան Էմմա	- Հայ օգնության ֆոնդի գործունեությունը Հայաստանում 1989-1994թթ.	207

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հովհաննիսյան Գեղամ	- Հնչակյան կուսակցության տեսակետը սոցիալիզմի, ազգայնականության և հայկական հարցի մասին (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ)	226
Հովհաննիսյան Սուսաննա	- Հովհաննես Թումանյանը Ուրալվելում.....	234
Օհանջանյան Արտեմ	- Մեծ Բրիտանիայի մեղսակցությունը հայոց ցեղասպանությանը	244
Հարությունյան Ավետիս	- Սոսկվայի հայկական կոմիտեի գործունեությունն առաջին աշխարհամարտի տարիներին	253

Գևորգյան Անդրանիկ	- Կարսի մարզի միացումը Հայաստանի Հանրապետությանը և Անգլիայի դիրքորոշումը...	258
Եթիմյան Գագիկ	- Կինոարվեստը և ՀԽՍՀ իշխանությունների քաղաքականությունը 1945-1956թթ.	264

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Հարությունյան Ավագ	- Երիվանի նահանգի Շարուր-Ղարալագյազի գավառի խաղողագործության և գինեգործության վիճակը XIX դարի վերջին և XX դարի սկզբին	271
Հարությունյան Ֆռունգիկ	- Ստավրոպոլ քաղաքի հայ համայնքի հասարակական-քաղաքական կյանքը (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ)	277
Պողոսյան Արմինե	- Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի ստեղծման հարցի շուրջ	289
Օվանեսով Բորիս	- Մեծ եղեռնի հուշահամալիրի ողիսականը. ազգային հուշարձան և խորհրդային իրականություն	292
Բաբայան Սերի	- Համազգային հայ կրթական և մշակութային միութիւնը 70-ամեայ տօնակատարութեանց սեմին (Հալէպի մասնաճիւղ)	297
Վիրաբյան Անատունի	- Արխիվային գործը Եվրախորհրդի արևմտա-եվրոպական երկրներում	304
Էքմանեան Բէկի		
Բաղադյան Էլլա		

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

- Հաշվետվություն «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2006թ. գործունեության	307
---	-----

ԼՐԱՏՈՒ

- Ցուցահանդեսներ. արխիվային ոլորտի կարևոր իրադարձություններ. միջազգային կապեր	312
---	-----

СОДЕРЖАНИЕ

ПУБЛИКАЦИЯ ДОКУМЕНТОВ

Магальян Артак	- Судебное дело Кусапатских Атабекианов	3
Мангасарян Вардигер	- Страницы из истории Погосьяновского национального учебного заведения (Египет) (1864-1936гг.).....	28
Саакян Рубен	- Из истории деятельности армянских добровольческих групп	44
Газиян Алвард	- Воспоминания Арташеса Барсегиан о резне армян и самообороне в Рштунике в 1915г.	62
Степанян Хачатур	- Вопрос о национально-культурной автономии армян Грузии в 1918-1921гг.	70
Алексанян Карине	- Укрепление Советской власти в Александропольском уезде (апрель-декабрь 1921г.)	73
Мартиросян Марине	- Документы о деятельности земляческого союза арабкирцев в Армении	92
Казахециан Владимир Аветисян Маро	- О вопросе организации репатриацииц.....	127
	- Воспоминания Арамаиса Тер-Даниеляна о антиармянской политике генерал-губернатора Карабаха Хосров-Бек Султанава.....	137
Бадалян Армен	- Деятельность АРФ Дашнакцутюн в некоторых общинах диаспоры в 1945-1985гг. .	144
Арутюнян Аваг	- Из истории редемаркации советско-турецкой границы (1973г.).....	175
Брутян Григор Овсепян Эмма Петросян Кнарик	- Виктор Амбарцумян - к 100 летию рождения	197
	- Деятельность фонда помощи Армении в Республике Армения 1989-1994гг.	207

СТАТЬИ

Оганисян Гегам	- Точка зрения гнчакской партии о социализме, национализме и об армянском вопросе	226
Ованесян Сусанна	- Ованес Туманян в Уравеле	234
Оганджаниян Артем	- Сообщничество Великобритании армянскому геноциду	244
Арутюнян Аветис	- Деятельность Московского армянского комитета в годы первой мировой войны	253
Геворгиян Андраник	- Присоединение Карсской области к Республике Армения и позиция Англии	258
Етимян Гагик	- Киноискусство и политика властей АССР в 1945-1956гг.	264

СООБЩЕНИЯ

Арутюнян Аваг	- О состоянии виноградарства и виноделия Шаруро-Даралагезского уезда Эриванской губернии в конце XIX и в начале XX веков	271
Арутюнян Фрунзик		
Погосян Армине		
Ованесов Борис	- Общественно-политическая жизнь армянской общины города Ставрополь (конец 19-го-начало 20-го века)	277
Бабаян Мери	- О вопросе создания Тифлисского Армянского Национального Бюро	289
Вирабян Аматуни	- Одиссея мемориала-обелиска Геноцида: национальный памятник и советская действительность	292
Экманян Беки	- Всенародный армянский образовательно-культурный союз накануне празднования 70-летия (Алепский филиал)	297
Бададян Элла	- Архивное дело в западноевропейских странах Совета Европы	304

АРХИВНОЕ ДЕЛО

- Отчет о деятельности ГНО «Национального архива Армении» в 2006г.	307
---	-----

ХРОНИКА

- Выставки, знаменательные события архивной отрасли, международные связи ..	312
---	-----